

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2025

Հունիսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետությունում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական ու բացասական շեղումներով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են 27-ին, 28-ին. Տավուշում գրանցվել է +31...+33^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +24...+26^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +34...+36^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +32...+34^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +25...+27^{0}C, Շիրակում՝ +24...+28^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +23...+27^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +30...+32^{0}C, Գեղարքունիքում՝ +20...+25^{0}C, Լոռիում՝ +25...+29^{0}C, Արմավիրում, Արարատում՝ +33...+35^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +24...+26^{0}C, նախալեռներում՝ +28...+33^{0}C:

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 24-ին, 25-ին. Շիրակում գրանցվել է 0...+5^{0}C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +4...+6^{0}C (Հանքավան՝ 0^{0}C), նախալեռնային շրջաններում՝ +8...+10^{0}C, Տավուշում +10...+12^{0}C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3...+5^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13^{0}C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +14...+18^{0}C, նախալեռնային շրջաններում՝ +5...+10^{0}C, Գեղարքունիքում՝ +3...+8^{0}C (Գավառ, Ճամբարակ՝ +2^{0}C), Լոռիում՝ +3...+8^{0}C (Տաշիր՝ +1^{0}C), Արմավիրում՝ +9...+13^{0}C, Արարատում՝ +12...+14^{0}C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 0...+3^{0}C, նախալեռներում՝ +10...+13^{0}C:

Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 17-28մմ (77-113%), Լոռիում՝ 16-24մմ (43-110%), Տավուշում՝ 10-11մմ (50-102%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 11-18մմ (39-54%), նախալեռներում՝ 1-15մմ (11-108%), Գեղարքունիքում՝ 1-14մմ - 5-60%, Սեմյոնովկա՝ 50մմ (155%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 4-23մմ (21-115%), նախալեռներում՝ 0.2մմ (2%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 0.4մմ (2%), նախալեռներում տեղումներ չեն դիտվել, Արմավիրում, Արարատում՝ 0.2-0.3մմ (3-5%), Սյունիքի հովտային շրջաններում՝ 1-3մմ (16-33%), նախալեռներում՝ 1-5մմ (6-15%):

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում շարունակվել է մշակաբույսերի աճն ու զարգացումը:

Հովտային շրջաններում կատարվել է կորիզավորների մասսայական և աշնանացան ցորենի բերքահավաք:

Բանջարանոցային մշակաբույսերի մոտ սկսվել է կանաչ հասունացումը, խոտաբույսերը ծաղկել են, դիտվել է ծխախոտի տերևների տեխնիկական հասունացում:

Դաշտերում և այգիներում կատարվել է հերթական վեգետացիոն ոռոգում:

Նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է մոմային հասունացման փուլում, եգիպտացորենը հուրանակալել է, պտղատուների մոտ տեղի է ունեցել շաքարանյութի կուտակում, կաղամբի մոտ՝ տեխնիկական հասունացում: Դիտվել է կարտոֆիլի վերգետնյա մասի թառամում:

Լեռնային շրջաններում հացահատիկային մշակաբույսերը գտնվել են կաթնային հասունացման փուլում: Շարունակվել է կաղամբի միջահաս տեսակի գլխի ձևավորումը, կարտոֆիլի ծաղկումն ավարտվել է: